ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Armenia
WWW.ARMENIA.TRAVEL

Հավելված 6

Մրցույթ

«Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացին» միջոցառման համար (այսուհետ՝ Միջոցառում)

Մրցութային միջոցառման նկարագրությունը

Միջոցառման շրջանակներում ստեղծվելու եւ իրականացվելու են զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթաց, որոնք իրագործվելու են ծրագիրը կազմող կազմակերպության կողմից: Դասաընթացների կազմակերպումը պետք է ընդգրկի զբոսավարների հմտությունների զարգացման համար անհրաժեշտ բովանդակությամբ ծրագրերի կազմում, դասընթացի մասնակիցների հավաքագրում, դասընթացի իրականացում եւ գնահատում: Ծրագիրը պետք է պարունակի ինչպես մասնագիտական թեմատիկ դասեր, այնպես էլ պրակտիկ աշխատանքներ զբոսավարների սպասարկման եւ զբոսաշրջիկների ապահովությանն ուղղված թեմաների շուրջ:

Միջոցառման *արդյունքները*

Միջոցառման ակնկալվող արդյունքներն են՝ **յուրաքանչյուր դասընթացի համար**

- Դասընթացի ծրագիր եւ դրա մանրամասն նկարագրություն
- Իրականացված տեսական դասընթացներ տեղական եւ միջազգային մասնագետների ներգրավմամբ
- Իրականացված գործնական դասընթացներ
- առնվազն 24 վերապատրաստված մասնագետ
- Դասընթացի ուղեցույց-ձեռնարկ՝ ներկայացված տեղեկատվության կարևորագույն բաղադրիչներով

Դիմելու պայմանները

Միջոցառման իրականացմանը կարող են դիմել այն իրավաբանական անձինք, որոնք ունեն

- Ուսուցման ազգային ռեեստրում գրանցված իրավաբանական անձին համարժեք կարգավիճակ, որը պայմանագրային հիմունքներով իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագիր
- Զբոսավարների պատրաստման/վերապատրաստման խմբային կարճաժամկետ ուսուցման մոդուլային ծրագրերի վերաբերյալ տվյալներ: Դրանք են՝
    - ծրագրի անվանումը,
    - դասընթացի նպատակը,
    - Մասնակիցների ընտրության պահանջներ,
    - Ծրագրի իրականացման մեթոդաբանություն
    - Մասնագիտական կազմի վերաբերյալ տեղեկատվություն,
    - ուսուցման նվազագույն տևողությունը՝ ժամերով և ժամանակացույցով:
- Դասընթացների և քննությունների կազմակերպման առնվազն մեկ տարվա փորձ,

- Դասընթացն իրագործող պատրաստված անձնակազմ՝ մոդուլային ծրագրում առկա բաղադրիչներին համապատասխան
    - Դասընթացավարներ՝ ըստ ոլորտների, թեմաների,
    - Քննական հանձնաժողով՝ ըստ ոլորտի, զբաղմունքի, որակավորման,
- Թվային հարթակներ՝ կազմակերպության գործունեության մասին հագեցած տեղեկատվությամբ:
- Դասընթացների իրականացման համար անհրաժեշտ միջավայր, գույք, պայմաններ

Հետաքրքրված կազմակերպությունները պետք է ներկայացնեն հետեւյալ տեղեկատվությունը ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն համաձայն մրցութային ընթացակարգի:

- Կազմակերպության գրանցման վկայական
- հայտատու կազմակերպության իրավասու մարմնի որոշումը մրցույթին սույն հրավերով նախատեսված պայմաններով մասնակցելու վերաբերյալ
- Կազմակերպության պորտֆոլիո՝ ընդգծելով նմանատիպ կրթություն իրականացնելու փորձը եւ համագործակցությունները
- Ծրագիր եւ կատարվող աշխատանքների ժամանակացույց,
- Մասնակիցների ընտրությանն կարգը
- Ներգրավվող մասնագետների տվյալներ, ինքնակենսագրականներ
- Ծրագրի իրականացման ծախսերի նախահաշիվ (ներառելով մասնակիցներին տրվող ուսուցողական նյութերը)՝ տեղեկատվություն իրականացվող միջոցառումների անվանումների, քանակի, միավորի գնի և դրանց համար նախատեսվող ծախսերի՝ նաև համաֆինանսավորման վերաբերյալ:

Հաշվետվողականությունը

Ընտրված կազմակերպությունը սերտորեն կհամագործակցի Զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի վարչության հետ՝ ստանալով անհրաժեշտ ուղղորդումներ եւ տեղեկատվություն ծրագրի ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ, իսկ հաշվետվությունները կներկայացնի ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտեի կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովի եզրակացությանը հետեւյալ սկզբունքով՝

- Պետք է ներկայացվեն վերապատրաստված մասնակիցների ցանկը՝ նշելով յուրաքանչյուրի համար օտար լեզվի իմացությունը,
- Կատարված աշխատանքների բովանդակային և ֆինանսական հաշվետվությունը պետք է ներկայացվեն ՀՀ ԷՆ Զբոսաշրջության Կոմիտե կնքված Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Մրցութային միջոցառման ժամկետը և պայմանները

Հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ՝ դեկտեմբեր 11, 2021թ.:

Վճարման ընթացակարգը

Միջոցառման իրականացման համար կանխավճար չի նախատեսվում:

Հերթական վճարումներն իրականացվելու են համաձայն կատարված աշխատանքի արդյունքում ներկայացված հաշվետվությունների: